ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2007թ. հունիսի 26-ին ժամը 19:00-ին
կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Հովիկ Աբրահամյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարար, ՀՀ Փոխվարչապետ
Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Անդրանիկ Մանուկյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Նազելի Վարդանյանը	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ-ի նախագահ
Տոնական Ղազարյանը	«Շենիկ» Զրօգտագործողների ընկերությունների միության նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ-ի նախագահ
Վարդան Համբարձումյանը	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ
Կարեն Նազարյանը	«Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամի նախագահ

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Ավետիսյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն

Ռուզաննա Ղազարյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Ալեքս Ռասինը	Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Իրինա Օհանանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի թարգմանիչ
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. "ՀՄԿ-ին ներկայացվող 4-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.

   ա/ Հատկացման հայտ և Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
   բ/ Հատկացման Նախապայմանների հաշվետվություն,
   գ/ ֆինանսական և աշխատանքային պլաններ,
   դ/ Եռամսյակային առաջընթացի հաշվետվություն,
   ե/ Գնումների կատարման հաշվետվություն:

2. Շինարարության համար նախատեսվող ստանդարտ մրցութային փաստաթղթերի փաթեթի քննարկում և հաստատում:

3. Արարատյան հարթավայրի գերխոնավ հողերի բնապահպանական և հիդրոլոգիական ելակետային ուսումնասիրության խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

4. «Ոռոգման նոր ջրամբարների կառուցման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

5. «Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանման կատարման վրա հիմնված գործող համակարգի վերանայում և բարելավում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթի տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման համակցված արդյունքների քննարկում և հաստատում:

6. «ՀՄՀ–Հայաստան» ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում Հ-17 Արմավիր – Իսահակյան - Գյումրի ավտոմոբիլային ճանապարհի երկու հատվածների (կմ 49+300 – կմ 60+960 և կմ 60+960 – կմ 73+780) վերանորոգման շինարարական աշխատանքների կապալառուի ընտրման մրցութային փաստաթղթերի քննարկում և հաստատում:

7. Այլ հարցեր.

   ա/ վերականգնվող ճանապարհների երթևեկային մասի լայնությունների փոփոխության մասին:

   բ/ տեղեկատվություն՝ ՀՄԿ ներկայացուցիչների այցի և ԿԽ-ի կողմից արդեն իսկ հաստատված մրցութային հանձնաժողովների կազմում, ինչպես նաև հանձնաժողովների որոշումներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՄԿ ներկայացուցիչների առաջարկության մասին:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝

1) հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 4-րդ Հատկացման հայտը և դրան կցվող հետևյալ փաստաթղթերի փաթեթը.
ա/ Հատկացման հայտ և եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
բ/ Հատկացման Նախապայմանների հաշվետվություն,
գ/ ֆինանսական և աշխատանքային պլաններ,
դ/ եռամսյակային առաջընթացի հաշվետվություն,
ե/ Գնումների կատարման հաշվետվություն:

2) ՀՀ Վարչապետի անունից հանձնարարել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար պարոն Վ. Խաչատրյանին՝ 2-օրյա ժամկետում ապահովել 4-րդ Հատկացման Նախապայմանների հաշվետվության 2.11.11 կետում նշված նախապայմանի /«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից վճարված 7.700 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկի ՀՄԿ-ին ետ վերադարձման ՀՄԿ պահանջի/ կատարումը:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել Շինարարության համար նախատեսվող ստանդարտ մրցութային փաստաթղթերի փաթեթը:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել Արարատյան հարթավայրի գերխոնավ հողերի բնապահպանական և հիդրոլոգիական ելակետային ուսումնասիրության խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Ոռոգման նոր ջրամբարների կառուցման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիրը:

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել «Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանման կատարման վրա հիմնված գործող համակարգի վերանայում և բարելավում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթի տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման համակցված արդյունքները:

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել «ՀՄՀ–Հայաստան» ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում Հ-17 Արմավիր – Իսահակյան - Գյումրի ավտոմոբիլային ճանապարհի երկու հատվածների (կմ 49+300 – կմ 60+960 <u>և</u> կմ 60+960 – կմ 73+780) վերանորոգման շինարարական աշխատանքների կապալառուի ընտրման մրցութային փաստաթղթերի փաթեթը:

Օրակարգի 7-րդ կետի.

1) «ա» ենթակետի վերաբերյալ որոշվեց՝

- ընդունել ի գիտություն «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանի տեղեկատվությունը՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում վերականգնվող ճանապարհների երթևեկային մասի լայնությունները՝ նոր կառուցվող և վերակառուցվող ճանապարհների համար ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից 1999թ. ընդունված «ՀՀՇՆ IV-11.05.02-99 Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ Շինարարական նորմերին համապատասխան փոփոխելու նպատակահարմարության մասին, և

- հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար պարոն Ա. Մանուկյանին ուսումնասիրել և տալ եզրակացություն՝ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից առաջարկվող ճանապարհների յուրաքանչյուր առանձին հատվածի լայնության փոփոխության նպատակահարմարության և տարբերակների վերաբերյալ:

2) «բ» ենթակետի վերաբերյալ որոշվեց՝

- ընդունել ի գիտություն «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանի տեղեկատվությունը՝ ԱՄՆ ՀՄԿ ներկայացուցիչների այցի մասին և այդ այցի շրջանակներում՝ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի կողմից արդեն իսկ հաստատված մրցութային հանձնաժողովների կազմում, ինչպես նաև այդ հանձնաժողովների որոշումներում, որոշակի փոփոխություններ կատարելու վերաբերյալ, ՀՄԿ ներկայացուցիչների առաջարկության մասին, և
- հավանություն տալ (10 /տաս/ կողմ, 1 /մեկ/ ձեռնպահ) ՀՄԿ առաքելության շրջանակներում Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիայի կողմից արված առաջարկություններին:

Օրակարգի հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու
Ռ. Ղազարյանը